

Խօսք Երախտագիտութեան  
Վարդան Թաշճեանի մեծարանքին առիթով  
ՄԿՀ-ի 1968-ի շրջանաւարտներուն 50 ամեակի  
համախմբումին  
Երեւան , 17 Մայիս 2018

Թանկագին եւ սիրելի Մելգոնեանցի քոյրեր, եղբայրներ եւ  
բարեկամներ

Ամէն բանէ առաջ պարտք կը զգամ իմ խորագգաց  
շնորհակալութիւններս  
եւ շնորհաւորութիւններս ողղելու Հայրենի հողի վրայ ձեր  
շրջանաւարտութեան 50 ամեակի այս հոյակապ  
համախմբումը  
կազմակերպող եւ առարկայացնող Արա Գուլեանին, Վահէ  
Հալաճեանին  
Միսաք Ներսէսեանին եւ օգնականներուն որոնց անխոնջ  
ջանքերուն շնորհիւ քով քովի եկան աշխարհի չորս  
անկիւններէն նախկին  
դասընկեր-դասընկերուիհներ եւ առաջին անգամ ըլլալով  
գիրար  
վերագտնելու երջանկութիւնը ապրեցան անոնցմէ  
ոմանք, Մելգոնեանէն  
հրաժեշտ տալէն ետք: Ի սրտէ շրորհակալ եմ նաեւ  
բարեկամիս  
Վարդգէս Գուրուեանին զիս ներկայացնող իր դրուատական  
խօսքերուն  
համար:  
ինչ ըսեմ, չափազանց զգացուած եմ,

առանձնաշնորհուած եմ ինձի  
եւ տիկնոջս հանդէպ ցուցաբերուած այս բարձր պատիւին,  
յարգանքին  
եւ սիրոյն համար, ողջ մնաք, բայց գիտէք որ կրթանուէր  
աշխատանքս  
շարունակ ճանչցաւ ձեր օրինակելի գործակցութիւնը,  
հասկացողութիւնը  
վստահութիւնը, ժպիտը եւ բարոյական ոգին, առանց այս  
գօրակից  
ագդակին կարելի պիտի չ` ըլլար իրագործել որեւէ նպատակ,  
ինչպիսի  
բնոյթ ալ կրէր անհատական կոչումն ու կարողութիւնը:  
Այս գեղեցիկ յուշանուէրը ես կ`ընդունիմ նաեւ յարգանքի  
տուրք մը  
բոլոր աշակերտներուս, հայ թէ օտար, վաստակաշատ  
մշակներուն,  
նուիրեալներուն, որոնց շունչը, քրտինքը, արիւնը կայ  
դրոշմուած ,  
անուրանալիօրէն, ձեր ոլորուած վկայականներուն մէջ: Անոնք  
իրենց  
վիճակուած առաքելութիւնը ի կատար հանեցին  
պատասխանութեան  
լրիւ գիտակցութեամբ: Ասոնք «մեծ» եղան ձեզի համար, մեզի  
համար,  
քանի որ իրենց դերը կատարեցին հոգիով ու հաւատքով:  
Յիշենք Մեծն  
Բրիտանիոյ մեծագոյն վարչապետներէն Սըր Ռիչարըն  
Չըրչիլի մէկ  
խօսքը, «The price for greatness is responsibility» , մեծութեան  
գինը  
պատասխանատուութիւնն է, եւ որքան ճշմարտօրէն կը

պատշաճի այս

խօսքը մեր սիրեցեալ ուսուցիչներուն: Անոնցմէ շատեր  
ափսոս մեկնած են այս աշխարհէն ու մեզ կը դիտէն

հեռուներէն: Ճակատագրի սեւ

խաղով, այս խումբին վերջերս միացաւ նաեւ մեր բոլորին  
սիրելի եւ

յարգելի Սարգիս Համպոյեանը, որ վստահ եմ մեզի հետ  
պիտի ըլլար դարձեալ, ինչպէս անցեալի բոլոր

համախմբումներուն, եթէ երբեք

անողոք հիւանդութիւնը չհարուածէր զինք: Աղիտաւի կորուստ  
մըն ալ

ցնցեց մեր միւս սիրելի ուսուցչին, Միհրան Ճիզմէճեանի  
ընտանեկան

բոյնը, երբ իրենց սիրասուն զաւակը Արան, որուն  
մանկութիւնը մեծցաւ

Մելգոնեանի անտառներուն շուրջ, շիջեցաւ անողոք այլ  
հիւանդութեամբ:

Վստահ եմ Միհրանն ու Վարդուկն ալ մեզի պիտի միանային  
եթէ երբեք

խնայուէր այս անսպասելի փոթորիկը: Մեր բոլորին  
վշտակցութիւնները

ու մխիթարական զգացումները երկու ընտանիքներուն ու  
պարագաներուն:

Սիրելիներ,

Կրթական մշակի մը համար չկայ աւելի քաղցր  
պատեհութիւն, երբ շրջապատուած է իր նախկին

աշակերտներով, որոնց կեանքը ընթացաւ

տարբեր ուղղիներով, տարբեր երկնականարներու տակ, եւ  
որքան ալ որ ֆիզիքական փոփոխութիւնը օրէ օր շեշտուեցաւ

իւրաքանչիւրին վրայ

Մելգոնեանը սակայն միշտ մնաց երիտասարդ մեր մտքին ու

մտածումներուն մէջ առտուընէ մինչեւ իրիկուն, եւ մեր  
երագներուն մէջ  
կէս գիշերէն մինչեւ արշալոյս: Այս այն Մելգոնեանն է որ լրած է  
ալ, 12  
տարիներէ իվեր, որուն զանգակը չի հնչեր ալ, որուն  
միջացքներէն չեն  
լսուիր ալ սան-սանուհիներու կրունկներուն կռինչը, որուն օդը  
չտեսներ արծագանգը առաւօտեան «Անմահ Լուսոյ»-ին եւ  
«Աւետիս Հայեր»-ուն,  
որուն անտառները, շէնքերը, դամբանը, բարերարներուն  
վիլլան,  
արծանները տխուր են, երբ չկայ ալ կեանք ու շարժում անոնց  
շուրջ:  
Մենք Կիպրահայերս ամէն օր ականատես ենք այս տխուր  
երեւոյթին:

Ով կրնար երեւակայել որ այս հերաւոր ասիերու  
Արարատեան մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայեան  
անուան թիւ 2 դպրոցի  
կամարներուն տակ, հայրենի մեր ձագուկներուն մատղաշ  
շրթներէն  
դարձեալ պիտի յորդէր «Անմահ լուսոյ»ն ու պահիկ մը  
արթնցնէր մեր  
սիրելի կրթարանը իր երկարատեւ մահաքունէն: Պրաւօ  
Տիգրան  
Ալթունեանին եւ Վահան Մուրատեանին, որոնց  
նախաձերնութեամբ  
ապրեցանք այդ յուզիչ պահերը եւ որոնց ծրագիրները կը  
ձգէն վառ  
պահել մեծ բարերարներուն պայծառ յիշատակը:

Ոչ միայն ոգիով, ներքին կեանքով, այլեւ բնութեամբ ալ  
գեղեցիկ էր

Մելգոնեանը: Այդ բնութիւնն էր որ ներշնչումներու աղբիւր  
եղաւ թէ

գրիչիս եւ թէ վրձինիս, եւ որպէսզի կարենամ կրթական  
ասպարէզիս մէջ ներմուծել «Ուսում եւ Կրթութիւն» զուգահեր  
երեւոյթը, փորձեցի խորանալ արուեստի մէջ եւս, հաւատալով  
որ ուսումը եւ կրթութիւնը

անբաժանելի տարերն են մարդկային բնութեան:Չի բաւեր  
բարձրագոյն

ուսում, երբ չկայ կիրթ, ազնիւ, համեստ վերաբերում, երբ չկայ  
հաղորդակցութիւն եւ կամ փոխադարձ հասկացողութիւն:

Կ`ապրինք

համացանցի եւ dotcom-ի արդիական աշխարհի մը մէջ,  
հաղորդակցութեանց ցանցերու մէջ, բայց քիչով կը տեսնենք  
անհատական հաղորդակցութիւնը զանազան մարզերէ ներս,  
ըլլայ

ընտանիք, ըլլայ գործատեղի, ըլլայ ընկերութիւն, ըլլայ  
հաւաքական

կեանք:

Մշակոյթի հասկացողութիւնը ինծի համար հանդիսացաւ  
կարեւոր

մտածողութիւն մը, հոգեբանութիւն մը: Երբ մտածենք թէ ինչ  
գիտէ մարդ

արարածը, ինչ կրցած է ստեղծել, կրնանք կռահել նաեւ թէ  
ինչպիսի

մշակութային անցեալի կամ պայմաններու ծնունդ է ան:

Արուեստը

դարձաւ ինծի համար պատգամ մը, նպատակ ունենալով  
մարդը

վերամիացնելու իր բնութեան եւ իր արժէքներուն ի խնդիր  
մեր ընտանեկան կեանքի բարոյական եւ իմացական

առողջութեան: Այս

ողղութեամբ երախտագիտութեանս կարելոր մէկ բաժինը  
կ'ուզեմ ուղղել

իմ սիրեցեալ կողակիցիս, Սիլվային, որ ժայռի մը պէս  
թիկունք կեցաւ ինծի շուրջ 50 տարի: Ձեր աւարտական  
տարին 1968-ին մենք նշանուեցանք եւ տարի մը ետք  
ամուսնացանք: Մեր ալ յոբելեանը`

գալ տարի: Սիլվան ինծի հետ շարունակ կիսեց եւ արցունք ու  
խնդուք

եւ երջանիկ կեանքի օրհնութիւնս եղաւ: Ըսած եմ միշտ որ  
յաջողութիւնը

երջանկութեան բանալին չէ, այլ երջանկութիւնն է  
յաջոճութեան բանալին:

Առիթով մը Նարեկի տնօրէնութեանս շրջանին, Արամ Ա.  
Կաթողիկոս մեր հանդիսասարահին մէջ երբ հարց տուաւ  
աշակերտութեան թէ ով է Վարդան Մամիկոնեանը,  
փոքրիկներէն մին «Պրն. Թաշճեան»-ը գոռաց, իսկ այլ  
առիթով մը աշակերտուիի մը  
ամենայն անմեղութեամբ, «զառանցել» բառով  
նախադասութիւն կազմելու պարտականութիւնը սապէս ըրած  
էր, «Պրն. Թաշճեանը ամէն  
օր հայերէնի պահուն մեզի աղուոր աղուոր կը զարանցէ...»:

Սիրելի քոյրեր եւ եղբայներ,

Եթէ ես շուրջ կէս դարու կրթական կեանքիս ընթացքին  
կրցայ

Վարդանի ոգիով եւ երբեմն ալ «զարանցել»-ով ձեզի պէս  
առողջ սերունդներ պատրաստել, ալ ինծմէ աւելի երջանիկ  
անձ չկայ ու չկրնար

ըլլալ...

Շնորհակալութիւն:

